

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՀՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 14-ին ս. Էջմիածնի Մայր տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, խարտավիլակությամբ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանի, ծայրագույն վարդապետական իշխանություն շնորհեց Մայր Աթոռի միաբան և Վրաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանին:

Ծայրագույն վարդապետական աստիճան ստանալու համար տ. Գևորգ վարդապետը գրել և Վեհափառ Հայրապետին ներկայացրել էր մի աշխատություն՝ տոմարագիտության վերաբերյալ, բաղկացած 121 մեքենագրված էջից:

Քննիչ հանձնաժողովի անդամները՝ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան, հոգևոր ճեմարանի ավագ դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյան, տոմարագետ և աստղագետ, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Բենիկ Թումանյան, ծանոթանալով «Տոմարագիտության դասընթաց» սույն աշխատությանը, գրավոր կերպով իրենց կարծիքները ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին:

Հուլիսի 13-ին, ուրբաթ օրը, Գևորգ վարդապետը հոգևոր ճեմարանի դահլիճում բանավոր կերպով ևս պաշտպանեց իր ավարտաճառը՝ ներկայությամբ Վեհափառ Հայրապետի, քննիչ հանձնաժողովի, արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, միաբանության և հրավիրյալ հյուրերի:

«Տոմարագիտության դասընթաց» աշխատությունը բաղկացած է երկու գլխավոր մասերից: Առաջին մասում հեղինակը տվել է տոմարագիտության տեսությունը և գործնական հաշվումները՝ իրենց կանոններով, իսկ երկրորդ մասում շարադրել է մի քանի կարևոր տոմարների առաջացման ու զարգացման պատմությունը՝ ծանրանալով հայ տոմարի պատմության վրա:

Վեհափառ Հայրապետը, տ. Գևորգ վարդապետի ավարտաճառի պաշտպանության առթիվ լսելով քննիչ հանձնաժողովի՝ աշխատության վերաբերյալ դրական կարծիքը, տվեց Իր բարձր գնահատանքն ու հայրապետական օրհնությունները:

Գևորգ ծ. վրդ. Սերայդարյանը ծնվել է Ռումինիայի Բուխարեստ քաղաքում 1938 թվականի օգոստոսի 29-ին:

1948 թվականին ծնողների հետ հայրենադարձվել է Հայաստան:

1956 թվականին, Երևանում միջնակարգ ուսումը ստանալուց հետո, ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որն ավարտել է 1962 թվականին՝ բաջալավ գնահատականով:

Գևորգ ծ. վրդ. Սերայդարյանը Մայր Աթոռում վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ. աշխատել է Մայր Աթոռի ֆինանսական և տնտեսական բաժիններում: Երկար տարիներ պաշտոնավարել է իբրև Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանի վարիչ, եղել է ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետի օգնական և Վեհափառ Հայրապետի գավազանակիր: 1970-ից մինչև 1972 ուսումնական տարում դասավանդել է հոգևոր ճեմարանում եկեղեցական տոմարագիտություն և եկեղեցագիտական այլ առարկաներ:

Տ. Գևորգ վարդապետը 1971 թվականից սկսած կազմում է Մայր Աթոռի օրացույցները:

1972 թվականի սեպտեմբերի 20-ին, Վեհափառ Հայրապետի հմր. 735 սրբատառ կոնդակով Գևորգ ծ. վարդապետը նշանակվել է Վրաստանի հայոց առաջնորդական տեղապահ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է տ. Գևորգ ծ. վրդ. Սերայդարյանին այս ուրախ առիթով և բարեմաղթում նրան նորանոր հաջողություններ՝ իր ապագա հոգևոր-եկեղեցական, թեմական-վարչական գործունեության ճանապարհի վրա: